

«Արդ Մուշեղ այր քաջ եղբայր իմ . . . դու կալար ի բազմականի խեղ-
դեցեր զնա»⁽⁴⁾ : Արդարեւ Փաւստոս կը յիշէ որ Մուշեղ դաւով կը
սպաննուի ինճոյքի սեղանին իսկ Վարազդատի հրամանաւ : Երբ Վա-
րազդատ պատրուակով ինճոյքի սեղանէն վեր կը կանգնի սենեակէն
պահ մը հեռանալու համար «աւազանին ամենայն բազմականացն յօտն
կացին առ հասարակ, իրրեւ նմա պատիւ ինչ առնել»⁽⁵⁾ : Ասիկա ազ-
գանչանն էր որ դաւազիրներ յարձակէին հսկայ Մուշեղի վրայ եւ
զանի սպաննէին տեղն ու տեղը :

Ե դարուն, այսինքն Հայ մատենադրութեան ոսկեդարուն, մեր
Թարգմանիչ-մատենադիրները կը գործածեն կապերտ բառը : Ասիկա
հնադոյն գործածութիւնն է այդ բառին՝ որեւէ լեզուով : Կապերտէն
ծագած է մեր ուսմակերէն եւ ցարդ գործածական կապերտը (քիլիմ,
անխաւ գորգ) : Հայ վաճառականները, որոնց սովորական էր Հայ
ուսմակերէնը, երբ ԺԳ դարուն գորգը Եւրոպայի մէջ կը ծախէին, ապ-
րանքը կը ներկայացնէին իր Հայ անուամբ, թէեւ ուսմակացած իրը
կարպետ, որմէ կը ծագի Եւրոպայի եւ Ամերիկայի մէջ գործածական
carpet⁽⁶⁾ :

Ե դարուն Հայոց Մուշէ կաթողիկոսը Սիւնիք կու գայ «փառա-
ւորութեամբ տարեալ իջուցանէին ի խորանն արքունական. եւ նստու-
ցանէին ի վերայ ոսկեթել եւ մարգարտաշար բազմականին, ի՛ր գահ
իշխանացն» : Յետոյ «տիկիւնն Սահակիս ընծայէ նմա զվրանն արքունի
ամենայն կահիւքն եւ բազմականօքն»⁽⁷⁾ : Դեռ այսօր իսկ վրաններուն
կահ կարասիները քանի մը իրերէ՛ զատ կը բազկանան բազմականներէ
կամ գորգերէ : Ինչ որ սակայն ամէնէն հետաքրքրականն է Օրբելեանի
այս վկայութեան մէջ սա է՝ որ այդքան վաղուց Հայերը ունէին ու
կը գործածէին ոսկեթել եւ մարգարտաշար բազմական կամ գորգեր :
Այս մեծագին գորգերը ծանօթ էին նոյն այս գործածութեամբ ԺԳ
դարու Հայոց, որոնց արարերէնէ հայերէնի Թարգմանուած (Առա-
քել Անեցիէ) Պղնձէ Քաղաքի Պատմութեան մէջ կը կարդանք նկա-
րադրութիւնը արքունի գահին՝ որուն վրայ նստած է թագուհին : «Եւ
զեղեցիկ թագուհի մը ի վերայ աթոռին նստած, եւ խալիչայ մի բուռ
մարգարտով լցած ի ներքեւ թագուհւոյն»⁽⁸⁾ : Ասիկա ոչինչով կը
տարբերի Օրբելեանի նկարագրած գահէն, բացի անկէ որ ըստ երե-
ւոյթի ԺԳ դարուն Հայոց ուսմակներուն մօտ մոռցուած բազմական
բառին տեղ գործածուած է աւելի ծանօթ բառ մը խալիչայ, թէեւ
երկուքին ալ իմաստն ըլլայ նոյն գորգը :

(4) Անդ, էջ 403 :

(5) Անդ, էջ 299 :

(6) Carpet Անգլիական գրականութեան մէջ առաջին անգամ ԺԶ դարու սկիզբը
գործածուած գտած եմ, այսինքն 1511ին :(7) Պատ. Նահ. Սիրական : - Ստեփանոս Օրբելեան, հրատ. Կ. Վ. Շահնա-
ղարեանց, էջ 116 :(8) Հրատ. 1792ի, էջ 140 : Ըստ ձեռագրաց հաւաքածոյիս մէկ օրինակին «եւ
խալիչայ մի. ամէն բուռն մարգարիտ էր շարած» :